



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ  
«ԱՐՄԱՎԻՐԻ Մ. Գ. ԾԱՂԿՈՆՔ»  
ՆԱԽԱՐԱՐ



Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«06» 09 2016թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 72

Ձեռնարկողը՝

«Էջմիածնի շինանյութեր» ԲԲԸ

«Արմավիրի մ. գ. Ծաղկունք»

Գործունեությունը՝

Մերձավանի բազալտի հանքավայրի  
արդյունահանման նախագծի շրջակա միջավայրի  
վրա ազդեցության գնահատման հաշվետվություն  
«Արմավիրի մարզ»

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրեն՝



Վ. Սահակյան



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
«**ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ**  
**ՆԱԽԱՐԱՐ**»



Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«06» 09 2016թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 72

**Ձեռնարկողը՝**

**«Էջմիածնի շինանյութեր» ԲԲԸ**

«**Արմավիրի մ. գ. Ծաղկունք**»

**Գործունեությունը՝**

**Մերձավանի բազալտի հանքավայրի  
արդյունահանման նախագծի շրջակա միջավայրի  
վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**  
«**Արմավիրի մարզ**»

«**Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն**» ՊՈԱԿ-ի  
տնօրեն՝



Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԸՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԸՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 72

«06» 09 2016թ.

**«Էջմիածնի շինանյութեր» ԲԲԸ կողմից ներկայացված ՀՀ Արմավիրի մարզի Մերձավանի բազալտի հանքավայրի արդյունահանման գնահատման հաշվետվության վերաբերյալ**

Պատվիրատու՝ Ներկայացված նյութեր՝	«Էջմիածնի շինանյութեր» ԲԲԸ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն (ՇՄԱԳ) և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝ Տեղադրման վայրը՝	«Ա» ՀՀ Արմավիրի մարզ

Մերձավանի բազալտի հանքավայրը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզում Երևանից 13կմ , Էջմիածնից դեպի արևելք 10կմ հեռավորության վրա:

Քասախ գետը հանդիսանում է տարածքի ամենախոշոր ջրային զարկերակը:

Տարածքի կլիման բնութագրվում է շոգ ամառով և սառը ձմեռով: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը կազմում է 320մմ: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 840-1200մ սահմաններում:

Մերձավանի հանքավայրի պաշարները հաստատվել են Երկրաբանության և ընդերքի պահպանության վարչության ՊՏՀ 14.05.1970թ.-ի N196 արձանագրությամբ ըստ A+B+C1 կարգերի 1562.7 հազ.մ<sup>3</sup> քանակությամբ:

Հանքավայրի պաշարները հաստատվել են որպես հումք ճակատային քարերի արդյունահանման համար (0.33x0.20x0.40մ չափսերի բլոկների ելքը՝ 29.5%), իսկ արդյունահանման թափոնները՝ որպես հումք շինարարական խճի արտադրության համար:

Հանքավայրի շահագործման տևողությունը կազմում է 50 տարի:

Նախագծվող բացահանքի եզրագծում ներփակված հաշվեկշռային (մարվող) պաշարների ծավալը կազմում է 168540մ<sup>3</sup> բազալտի զանգված, մակաբացման ապարներ չկան:

Բացահանքի եզրագծում բազալտի արդյունաբերական պաշարների ծավալը՝ բնանասերում թողված 18500մ<sup>3</sup> կորուստների դեպքում կազմում է 150000մ<sup>3</sup> բազալտի զանգված:

Ելնելով հանքավայրի տեղադրման լեռնաերկրաբանական պայմաններից նախագծում ընդունված են հանքադաշտի հետևյալ պարամետրերը.


Հանքադաշտի առավելագույն երկարությունը մակերևույթի վրա - 270մ;

Հանքադաշտի առավելագույն լայնությունը մակերևույթի վրա - 115մ;

Հանքադաշտի մակերեսը մակերևույթի վրա 19000մ<sup>2</sup>(1.9հա)

Բացահանքի առավելագույն խորությունը - 16մ:

*« Կրկնա ՏԵ Երևան ԿԵՄՊ »*



Հանքավայրի լեռնատեխնիկական պայմանները և հատկապես մակաբացման պայարների բացակայությունը և բազալտների ոչ հզոր շերտը հնարավորություն են տալիս ընդունել մշակման բաց եղանակ: Ընդունված է աստիճանի 5մ և ենթաստիճանի 2.5մ բարձրությամբ խորացող մշակման համակարգ հիդրոճեղքման եղանակի կիրառմամբ:

Բազալտից բլոկներ ստանալու ժամանակ ենթաստիճանների հորատման համար ընդունված է ՈՒ-50B հորատող մուրճ:

Օգտակար հանածոյի կորուստները որոշվում են երկու դասով՝ ընդհանուր հանքային և շահագործական:

Ընդհանուր հանքային կորուստները, որոնք գոյանում են հանքադաշտի տարածքում գտնվող շենքերի և շինությունների տակ թողնվող պաշտպանիչ բնամասերից-բացակայում են:

Շահագործական կորուստների 2-րդ դասի 1-ին խմբով անցնող հանքակողի և հատակի բնամասերում թողնվող կորուստները կազմում են 11%:

Շահագործական կորուստների 2-րդ դասի 2-րդ խմբով անցնող արտադրանքի տեղափոխման և պայթեցման աշխատանքների պրոցեսների հետ կապված կորուստները ըստ նորմերի համապատասխանաբար կազմում են 0.5% և 0.0% :

Համաձայն տեխնիկական առաջադրանքի բացահանքի տարեկան արտադրողականությունը կազմում է 3370մ<sup>3</sup> մարվող և 3000մ<sup>3</sup> արդյունահանվող բազալտի զանգված:

Հանքադաշտի բացումը իրականացված է արտաքին տեղադրման առանձին և մեկ ներքին տեղադրման ընդհանուր թեք խրամների միջոցով: Բացող խրամների լայնությունը ըստ հատակի 8-12մ:

Բացահանքը բացված է և նոր լեռնակապիտալ աշխատանքներ չեն նախատեսվում:

Բազալտի արդյունահանումը կատարվում է համատարած ձևով կիրառելով հիդրոսեպային ճեղքման եղանակները:

Բազալտի թափոնների բարձման և տեղափոխման համար ընդունված է էքսկավատոր ՅՕ-6112 և ավտոհիքնաթափ ԿրԱ3-2566: Բլոկների հանույթի համար ընդունված է հիդրոսեպ սարքավորում: Աշխատանքային հրապարակի լայնությունը կարծր ապարների համար նորմատիվով ընդունված է 30մ, իսկ ճաքավորված թույլ բազալտի համար 50մ:

Բազալտի թափոնների բարձման աշխատանքների համար ընդունված է 1.25մ<sup>3</sup> շերտի տարողությամբ ուղիղ թիով սարքավորված ՅՕ-6112 մակնիշի միաշերտի էքսկավատոր:

Բազալտի բլոկների և թափոնները տեղափոխումը դեպի վերամշակման արտադրամաս իրականացվում է ԿրԱ3-2566 մակնիշի ավտոհիքնաթափով: Տեղափոխման հեռավորությունը մինչև 0.5կմ:

Բազալտի բլոկներն ու թափոններն ամբողջությամբ տեղափոխվում են գոյություն ունեցող վերամշակման արտադրամաս 0.5կմ և լցակայանի կարիք չկա:

Բացահանքի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվում է աշխատանքային հրապարակների, ավտոճանապարհների և լցակայանների մակերևույթները ջրելու նպատակով: Ջուրը բերվում է ԿՕ-002 մակնիշի ջրցան մեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվում է В1-ВЦА-1 ջրի ցիստեռնով:

Հանքադաշտի մերձավոր ակտիվ մակերեսներից դեպի բացահանք մթնոլորտային տեղումների հոսքը կանխելու նպատակով նախատեսված է ջրհեռացման խրամ 800մ երկարությամբ:

Ամմիջական բացահանքի տարածքը տեղացող ջրերը ռելիեֆային հնարավորությունով մինչև սահմանային գիծը եղած հորիզոններից մակերևույթ են դուրս գալիս ինքնահոսով, իսկ սահմանագծից ներքև եղած հորիզոններում ճեղքերով ներծծվում են հատակի ապարներում :

Նշված հանքավայրի տարածքը զուրկ է զանգվածային անտառային և բուսական ծածկույթներից:

Հանքավայրի տարածքում բացակայում են շինարարական կառույցներն ու ճարտարապետական կոթողները:

Հանքավայրի տեղամասերի շահագործման ժամանակ կառաջանան փոշեառաջացման օջախներ և ռելիեֆի փոփոխություն: Բացահանքի շահագործման ժամանակ բնապահպանական միջոցառումներից նախատեսվում են՝

- փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակները, հանքախորշերը, լցակույտերը, մուտքային և դեպի լցակույտեր տանող ավտոճանապարհը և այլն) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին (օրեկան 2-3 անգամ):
- Բացահանքի մշակված տարածության լեռնատեխնիկական վերակուլտիվացիա:
- Դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա խլացուցիչների և արտանետվող գազի հոսքի վրա գտիչների տեղադրում՝ թունավոր խառնուրդների չեզոքացման համար:

Նավթամթերքները պահվում են բացահանքի արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա, կամ ծածկի տակ պահեստ): Վերջինիս հատակը բետոնավորվում է համապատասխան թեքությամբ, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը: Պահեստին ամրագրվում է աշխատակից լիցքավորող, որը սահմանված կարգով բաց է թողնում նավթամթերքները և միաժամանակ պատասխանատու է հակահրդեհային և բնապահպանական միջոցառումների համար: Բացահանքի շահագործման ընթացքում առաջանում են բնապահպանական տարբեր վտանգավորության թափոններ, որոնցից են՝ օգտագործված մեքենայական յուղերն ու քսայուղերը, մաշված դետալները, մետաղական թափոնները և կենցաղային աղբը: Օգտագործված յուղերն ու քսայուղերը հավաքում են առանձին տարաների մեջ հետագա ուտիլիզացման համար, կամ հանձնվում են երկրորդական վերամշակման կետ: Մաշված ավտոդողերը հանձնվում են շահագործող կազմակերպություններին կամ տեղափոխվում կենցաղային աղբի հետ մոտակա աղբահավաք կետը: Հնամաշ դետալներն ու մասերը հավաքվում են հատկացված առանձին տեղում և հանձնվում որպես մետաղական ջարդոն:

Բացահանքի շահագործման ավարտից հետո կատարվում է բացահանքի հատակի մակերեսի հարթեցում բուլդոզերի միջոցով: Հարթեցման տարածքը կազմում է 2.8հա: Բացահանքի մշակված տարածքի լեռնատեխնիկական վերակուլտիվացիայի համար անհրաժեշտ շահագործական ծախսերը կազմում են՝ 491.7հազ. դրամ:

«Օրենսդրությամբ սահմանված կարգով «Արմավիրի մարզի Մերձավան համայնքում տեղի են ունեցել հանրային քննարկումներ, որի ընթացքում նախատեսվող գործունեությունն արժանացել է հավանության:

Վերլուծելով ներկայացված գնահատման հաշվետվությունը կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

նախատեսված միջոցառումների արդյունքում հանքավայրի արդյունահանման ընթացքում տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով, կգտնվի թույլատրելի նորմայի սահմաններում: Նախատեսված են շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված բավարար միջոցառումներ:

Այսպիսով, հիմք ընդունելով խախտվող տարածքների մակերեսը, նախագծով մշակված բնապահպանական միջոցառումները՝ կարելի է ենթադրել, որ նախատեսվող գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա պետք է ունենա նվազագույն ազդեցություն (չգերազանցելով սահմանված նորմերը):

### Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է «Օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:

2. Արդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտի փաստաթղթերում ամրագրված բնապահպանական միջոցառումների և սոցալ-տնտեսական ծրագրի պահանջներին, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:

3. Արդյունահանման ընթացքում առաջացած շինադբը (կենցաղային աղբ) անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Էջմիածնի շինանյութեր» ԲԲԸ կողմից ներկայացված ՀՀ Արմավիրի մարզի Մերձավանի բազալտի հանքավայր արդյունահանման գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պահանջով:



Ձ. Զուռնայան